ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 3, 1959 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԷՐԱՑՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

1958 թ. դեկտեմբերի 22—24-ը Բաքվում տեղի ունեցավ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Պատմական գիտությունների բաժանմունքի և Ադրբեջանական ՍՍՌ, Վրացական ՍՍՌ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիաների Պատմության ինստիտուտների միացյալ գիտական սեսիան՝ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պրոբլեմների ուսումնասիրությանը Անդրկովկասում։

Սեսիային մասնակցում էին Մոսկվայի, Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի, Ղազախստանի, Էստոնիայի և Դաղստանի գիտնականները։

Սեսիան բացեց Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկ, Պատմության ինստիտուտի դիրեկտոր Ի. Ա. Հուսեյնովը։

«Սոցիալիստական ռևոլյուցիայի համար մղած պայքարի առանձնահատկությունները Ադրբեջանում» զեկուցումով հանդես եկավ ակադեմիկ Ի. Ա. Հուսեյնովը, որը խոսեց Ադրբեջանի բանվոր դասակարգի և գյուղացիության Սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարի պատմության էտապների և նրանց հետ կապված կարևորագույն խնդիրների մասին։

Ի. Ա. Հուսեյնովը այն կարծիքն է հայտնում, որ 1917 թ. Ադրբեջանում տակա էին սոցիալիստական ռևոլյուցիայի սոցիալ-տնտեսական բոլոր նախադրյալները։ Որպես բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան սոցիալիստականի վերաճման տեղական յուրահատկություն, նա նշեց այն, որ Ադրբեջանում, բացառությամբ Բաքվի, երկիշխանություն գոյություն չի ունեցել, Սովետները իշխանություն չեն ունեցել։

Զեկուցողը մանրամասն կանգ առավ Բաքվի բանվորների սեպտեմբերյան գործադուլի, Բաքվի Սովետի գործունեության, մարտյան քաղաքացիական կռիվների և Բաքվի կոմունայի պատմության հարցերի լուսաբանման վրա։

Ի. Ա. Հուսեյնովը Բաքվի կոմունայի անկման հիմնական պատճառը համարում է միջազգային իմպերիալիզմի ինտերվենցիան։ Նա խոսում է նաև կոմունայի ղեկավարների կողմից իբր թե թույլ տված «մի շարք լուրջ սխալների» մասին, որոնք նպաստել են Կոմունայի պարտությանը։

Այնուհետև զեկուցողը խոսում է բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ, Ադրբեջանի բանվոր դասակարգի և գյուղացիության հերոսական պայքարի մասին Սովետական իշխանության համար, որը 1920 թ. վերջացավ հաղթանակով։

«Սոցիալիստական ռևոլյուցիայի զարգացման էտապները Անդրկովկասում և Սովետական իշխանության հաղթանակի ուշացման պատճառները Հայաստա-

նում» հետաքրքիր թեմային էր նվիրված պատմական գիտությունների դոկտոր Ա. Մ. Հակոբյանի զեկուցումը, որում այն տեսակետն էր առաջ քաշվում, որ չնայած ռևոլյուցիոն սիտուացիայի արագ հասունացման՝ 1917 թ. նոյեմբերից մինչև 1918 թ. փետրվարը, երկրամասում գինված ապստամբության միջոցով իշխանությունը գրավելու և Սովետական իշխանություն հաստատելու անհրաժեշտ պայմաններ չեն եղել։ Նա եզրակացնում է, որ ռևոլյուցիայի զարգացման տվյալ էտապում, պայքարը իշխանության համար պետք է դնար, և իրոք դնում էր, այլ ճանապարհով, այսինքն, էսեռա-մենշևիկյան Սովետները գրավելու, նրանց կազմը փոխելու և Սովետները Սովետական իշխանության իսկական օրգաններ դարձնելու ուղիով։ Այդպես էր դրված խնդիրը մինչև Ռաքովի կոմունան։

Այն, որ Սովետական իշխանությունը Հայաստանում հաղթանակեց ուշացումով, 1920 թ. Ա. Մ. Հակոբյանը բացատրում է հետևյալ երեք առանձնահատկություններով. Հայաստանի տնտեսական հետամնացությամբ, բնակչության կազմի խայտաբղետությամբ և վերջապես նրանով, որ բացի համառուսական պարտիաներից, այստեղ գոյություն ունեին մի շարք ազգայնական պարտիաներ և հոսանքներ, որոնք քողարկված սոցիալիզմի, անկախության և ազատության դիմակի տակ դժվարացնում էին Սովետական իշխանության համար մղվող պայքարը։

Բացի վերոհիշյալ առանձնահատկություններից, Ա. Մ. Հակոբյանը թվում է նաև մի շարք գործոններ, որոնք ազդել են սոցիալիստական ռևոլյուցիայի զարգացման ընթացքի վրա և ուշացրել նրա հաղթանակը։

Առաջին հերթին զեկուցողը անհրաժեշտ է համարում նշել այն, որ կենտրոնական Ռուսաստանի համեմատությամբ Անդրկովկասում ուժեղ էր օտարերկրյա ինտերվենտների ճնշումը։ Էսեռները, մենշևիկները և դաշնակները կատարեցին հրեշավոր ոճրագործություն՝ Հայաստանը անջատելով Ռուսաստանից։ Մյուս գործոնը, որը վճռական նշանակություն ունեցավ Սովետական իշխանության հաղթանակի ուշացման գործում, դա այն էր, որ ընտեղծված չափազանց բարդ պայմաններում, չնայած բոլոր ջանքերին, Սովետական Ռուսաստանը 1918—1920 թթ. չկարողացավ ռազմական օգնություն ցույց տալ Անդրկովկասի և Հայաստանի ռևոլյուցիոն մասսաներին։

Խոսելով սոցիալիստական ռևոլյուցիայի զարգացման էտապների մասին, Ա. Մ. Հակոբյանը այն բաժանում է երկու շրջանի, առաջին՝ 1917 թ. նոյեմբերից մինչև 1918 թ. ապրիլը և երկրորդ՝ 1918 թ. ապրիլից մինչև Սովետական կարգերի հաստատումը Անդրկովկասում։

«Սոցիալիստական ռևոլյուցիայի ուշացման պատճառները Վրաստանում» թեմայով զեկուցում կարդաց պատմական գիտությունների դոկտոր Ա. Ն. Սուրգուլաձեն, որը կոպիտ սխալ համարելով այն պատմաբանների տեսակետները, որոնց համաձայն 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբներին Անդրկովկասում հնարավոր է եղել գրավել իշխանությունը, պաշտպանում է Ֆ. Մախարաձեի աշխատություններում առաջ քաշված այն կոնցեպցիան, որ իբր հիշյալ ժամանակաշրջանում Անդրկովկասում բոլշևիկների կողմից իշխանությունը գրավելու ոչ մի հնարավորություն չի եղել։

Ըստ Ա. Ն. Սուրգուլաձեի Վրաստանում սոցիալիստական ռևոլյուցիայի ուշացման հիմնական պատճառները հետևյալներն են. ա) մանր բուրժուական խավի գերակշռությունը, բնակչության ազգային կազմի խայտաբղետությունը,

բ) Վրաստանի և ամբողջ Անդրկովկասի կտրվածությունը Ռուսաստանից, գ) գերմանա-թուրքական, իսկ հետո անգլո-ամերիկյան իմպերիալիստների զինված միջամտությունը Վրաստանի և Անդրկովկասի ներքին գործերին։

Զեկուցողը Սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարի ժամանակաշրջանը բաժանում է երկու հիմնական էտապների. ա) 1917 թ. փետրվարից մինչև Բաքվի կոմունայի անկումը, բ) Բաքվի կոմունայի անկումից մինչև Սովետական իշխանության հաստատումը։

Հաջորդ երեք զեկուցումները նվիրված էին 1917—1918 թթ. Անդրկովկասի բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների Սովետների գործունեության ընութագրմանը։

«Բանվորների և զինվորների դեպուտատների Սովետները Ադրբեջանում 1917—1918 թթ.» թեմայով զեկուցում կարդաց պատմական գիտությունների դոկտոր Զ. Ի. Իբրահիմովը, որը մանրամասն խոսեց փետրվարյան ռևոլյուցիայից հետո Սովետների ստեղծման բարդ պրոցեսի մասին, ցույց տալով, որ արդեն մարտ-ապրիլ ամիսներին համարյա բոլոր խոշոր գավառային քաղաքներում, երկաթուղային կայաններում և խոշոր բնակավայրերում ստեղծվեցին Սովետներ։ Վերլուծելով Սովետներում տարբեր քաղաքական պարտիաների վարած քաղաքականությունը, զեկուցողը ցույց է տալիս, թե ինչպիսի ծանր պայմաններում Ադրբեջանի բոլշևիկները կարողացան հաջողությունների հասնել և արդեն հոկտեմբերի 13-ին Բաքվի Սովետը վերցնել իրենց ձեռքը։

Նա այն կարծիքն է հայտնում, որ Ադրբեջանի բանվորների և գյուղացիների դեպուտատների Սովետները անցել են զարգացման այն հիմնական էտապները, որոնք անցել են կենտրոնական Ռուսաստանի Սովետները։

Այնուհետև Զ. Ի. Իբրահիմովը խոսում է Բաքվի Սովետի տակտիկական դծի, միջոցառումների, մարտյան դեպքերի և Բաքվի կոմունայի մասին, ցույց է տալիս, թե ինչպիսի մեծ հաջողությունների հասան Բաքվի բոլշևիկները գյուղացիական Սովետների կազմակերպման և գյուղացիական Սովետների համագումարների հրավիրման գործում։

Պատմական գիտությունների դոկտոր Ե. Ե. Ֆբուրչուլաձեն զեկուցում կարդաց «Սովետները Վրաստանում Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի նախապատրաստման ժամանակաշրջանում» թեմայով։ Նա առաջ քաշեց նոր, բայց ոչ հիմնավորված կոնցեպցիա Սովետների առաջացման, զարգացման և դասակարգային էության մասին Վրաստանում։

Ըստ այդ կոնցեպցիայի աշխատավորների դեպուտատների Սովետները Վրաստանում, ի տարբերություն կենտրոնական Ռուսաստանի Սովետների, առաջացել են ոչ թե ժողովրդական մասսաների նախաձեռնությամբ՝ ներքևից, այլ ղեկավար պարտիական աշխատողների նախաձեռնությամբ՝ վերևից։ Այս փաստից էլ նա եզրակացություն է հանում այն մասին, որ տեղական Սովետները չէին հանդիսանում աշխատավոր մասսաների ստեղծագործության տարբերային արդյունքը և դեռ սաղմնային վիճակում կաթվածահար եղան և վերածվեցին ժամանակավոր կառավարության կցորդների։ Վրաստանում երկիշխանություն չստեղծվեց, ամբողջ իշխանությունը անբաժան կերպով պատկանում էր Անդրկովկասյան հատուկ կոմիտեին։

Ի տարբերություն կենտրոնական Ռուսաստանի Սովետների, որոնք Կոռնիլովշչինայից հետո սկսեցին բոլշևիկացման պրոցես ապրել, Վրաստանի Սովետները, ընդհակառակը, քանի գնում ավելի ու ավելի էին կորցնում ի-

բենց ժողովրդական, ռևոլյուցիոն էությունը և փաստորեն ոչ միայն չէին նպաստում, այլ արգելակում էին ռևոլյուցիայի զարգացմանը։

Պատմական գիտությունների թեկնածու Հ. Մ. Էլչիբեկյանը հանդես եկավ «Սովետները Հայաստանում 1917—1918 թթ.» զեկուցումով։ Նա խոսեց փետրվարյան ռևոլյուցիայից հետո Հայաստանում ստեղծված Սովետների մասին, վերլուծելով նրանց դասակարգային էությունը, տարբեր պարտիաների գործունեությունը այդ Սովետներում և այլն։

Զեկուցողը մանրամասն կանգ առավ Ալեքսանդրապոլի և Երևանի Սովետների գործունեության վերլուծության վրա։

Վերջին երեք զեկուցումները նվիրված էին երկրամասի աշխատավորության մղած պայքարին իմպերիալիստական պետությունների ինտերվենցիայի դեմ։

Պատմական գիտությունների թեկնածու Գ. Ա. Գալոյանը զեկուցեց «Հայաստանի աշխատավորության պայքարը ինտերվենտների դեմ իր ազգային-ազատագրության համար 1917—1921 թթ.» թեմայով։

Զեկուցողը հարուստ փաստական նյութերի հիման վրա ցույց տվեց, որ ինտերվենցիան Անդրկովկասում սկսվել է ոչ թե 1918 թ., ինչպես գրում են մի շարք պատմաբաններ, այլ 1917 թ. աշնանը և արտահայտվել է Անդրկովկասյան կոնտրռևոլյուցիային ֆինանսական և տնտեսական օգնություն ցույց տալու մեջ։

1918 թ. ամառը անգլիական իմպերիալիստները կազմակերպեցին իրենց առաջին զինված ինտերվենցիան, որի արդյունքը եղավ Բաքվի կոմունայի անկումը։ Գերմանիայի անկումից հետո, երբ ձախողվեց գերմանա-թուրքական ինտերվենցիան, անգլիական իմպերիալիստները կատարեցին երկրորդ զինված ինտերվենցիան և գրավեցին Անդրկովկասը։

Այնուհետև Գ. Ա. Գալոյանը մանրամասն խոսեց ԱՄՆ-ի Հայաստանի նկատմամբ ունեցած գավթողական պլանների մասին, որոնք արտահայտվեցին, մասնավորապես, Հայաստանի մանդատի հարցում։

Պատմական գիտությունների թեկնածու Ի. Ի. Միրցխուլավան զեկուցում կարդաց «Վրաստանի աշխատավորության պայքարը 1918—1921 թթ. արտաքսմանության օկուպանտների դեմ իր ազգային-ազատագրության համար» թեմայով, որում ցույց տվեց, թե ինչու և ինչպես վրացական մենշևիզմը գնաց դեպի միջազգային իմպերիալիզմի հետ դաշինքի կնքումը՝ երկիրը հանձնելով սկզբից գերմանական, իսկ հետո անգլիական գավթիչներին։

Նա ցույց տվեց, թե վրացական մենշևիկների և միջազգային իմպերիալիզմի տիրապետության ծանր տարիներին ինչպես էր օրավուր, բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ, աճում ռևոլյուցիոն շարժումը, որը վերջացավ Սովետական իշխանության հաղթանակով։

Վերջին զեկուցումը կարդաց պատմական գիտությունների դոկտոր Ե. Ա. Տոկարժևսկին «Ադրբեջանի աշխատավորության պայքարը 1918—1920 թթ. իր ազգային-ազատագրության համար իմպերիալիստների լծից» թեմայով։

Զեկուցողը ցույց տվեց, որ միջազգային իմպերիալիզմի երկու լագերն էլ ձգտում էր դեպի Ադրբեջան և փաստորեն անգլիական ինտերվենցիան հանդիսացավ Բաքվի կոմունայի պարտության հիմնական պատճառը։ Ինտերվենտների տիրապետությունը Ադրբեջանում շարունակվեց 1918 թ. գարնանից մինչև 1920 թ. աշունը։ Ինչպես Ադրբեջանը, այնպես էլ ամբողջ Անդր-

կովկասը անգլիական իմպերիալիստները օգտագործում էին, որպես պլացդարմ Սովետական Ռուսաստանի դեմ կռվելու համար։

Ե. Ս. Տոկարժևսկին այնուհետև բավականին մանրամասն կանգ է առնում, Բաքվի կոմունայի պարտությունից հետո, Ադրբեջանի աշխատավորության Սովետական իշխանության հաղթանակի համար մղած պայքարի պատմության վրա։

Կարդացված զեկուցումների շուրջը ծավալվեցին սուր վիճաբանություններ։ Ելույթ ունեցան 15 հոգի։

Պատմական գիտությունների թեկնածու Ղ. Դալլաքյանն իր ելույթը նվիրեց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հարցին, ցույց տալով, որ այն բավարար չափով ուսումնասիրված չէ։ Նա այն կարծիքն է հայտնում, որ ռևոլյուցիայի առաջին շրջանում բոլշևիկյան կազմակերպությունները չկարողացան ամրապնդել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

Խոսելով ազգային հարցի մասին, Ղ. Դալլաքյանը գտնում է, որ այդ բնագավառում Անդրկովկասի բոլշևիկները չկարողացան լայն կերպով պրոպագանդել ավտոնոմիայի լոզունգը, այն հասցնելով քաղաքի և գյուղի աշխատավորությանը և դրանով իսկ կոնտրռևոլյուցիոն ուժերի ձեռքից վերցնել ազգային ազատագրության դրոշը։

Ինչ վերաբերում է Սովետական իշխանության հաղթանակի ուշացման պատճառներին, նա ասում է, որ այն պետք է բացատրել Սովետների համաձայնողական քաղաքականությամբ, երկրամասի հետամնացությամբ, բնակչության ազգային կազմի խայտարղետությամբ, նրանով, որ չօգտագործվեց ռևոլյուցիոն բանակը իշխանությունը վերցնելու համար և մի շարք այլ ֆակտորների միացությամբ։

Պատմական գիտությունների թեկնածու Հ. Կարապետյանը հայտնում է այն կարծիքը, որ 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբներին եղել է բոլշևիկների կողմից իշխանությունը գրավելու ռեալ հնարավորություն։ Իր փաստաթղթից ելույթում նա կանգ է առնում Հյուսիսային Կովկասի սպիտակգվարդիական ուժերի բացասական ազդեցության խնդրի վրա, որը հանդիսացավ, պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի ուշացման կարևորագույն պատճառներից մեկը։

Պատմական գիտությունների թեկնածու Մ. Բսմայիլովը խոսեց այն մասին, որ Անդրկովկասում ռևոլյուցիայի սոցիալ-տնտեսական նախադրյալների ուսումնասիրման վրա անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել, մինչդեռ այն մեծ նշանակություն ունի ռևոլյուցիայի հաղթանակի ուշացման ուսումնասիրման գործում։

Պատմական գիտությունների թեկնածու Լ. Խուրշուդյանը գտնում է, որ Կովկասում 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբներին առկա է եղել ռևոլյուցիոն սիտուացիան, առկա են եղել ռևոլյուցիայի օբյեկտիվ և սուբյեկտիվ ֆակտորները, ռեալ հնարավորություններ են եղել բոլշևիկների կողմից իշխանության գրավման համար։ Այդ գործում վճռական դեր պետք է կատարեր ռուսական բանակը, որի մեծ մասը ռևոլյուցիոն էր և գտնվում էր բոլշևիկների ազդեցության տակ։

Նա բերում է համապատասխան փաստեր ապացուցելով, որ և Վ. Ի. Լենինը, և Ս. Դ. Շահումյանը և պարտիայի Կենտկոմը եղել են այդ կարծիքին։

Սակայն, չնայած դրան, բոլշևիկների Երկրային կոմիտեի մեծամասնության օպորտունիստական քաղաքականության պատճառով ձեռքից բաց է թողնվում իշխանության գրավման հարմար մոմենտը։

Ինչ վերաբերում է Անդրկովկասի առանձնահատկություններին, Լ. Խուրշուդյանը այն կարծիքն է հայտնում, որ նրանք չազդեցին երկրամասի ռևոլյուցիոն շարժումների զարգացման տեմպի վրա, չփոխեցին նրա օրինաչափությունները և զարգացման տենդենցը։

Պատմական գիտությունների թեկնածու Մ. Իսկենդերովը (ՄԼԻ Ադրբեջանական ֆիլիալի դիրեկտոր) խոսեց Սովետական իշխանության համար մղված պայքարի մի շարք հարցերի մասին, հատկապես կանգ առնելով Կոմունայի պարտության պատճառների վրա։ Նա չհամաձայնվեց Ե. Բուրչուլաձևի այն տեսակետի հետ, որ Սովետները Անդրկովկասում չէին հանդիսանում ժողովրդի ստեղծագործության արդյունքը և Ա. Սուրգուլաձևի այն մտքի հետ, որ ռևոլյուցիայի հաղթանակի ուշացման պատճառներից մեկը հանդիսանում է բնակչության ազգային կազմի խայտարղետությունը։

Պատմական գիտությունների թեկնածու Դ. Զուգաևը (ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտ) ասաց, որ շատ լավ է, երբ բարձրացվում և ուսումնասիրվում են տեղական առանձնահատկությունները, այդ բնագավառում մենք առաջին քայլերն ենք անում, սակայն չպետք է ծայրահեղությունների մեջ ընկնել և տեղական առանձնահատկությունները հակադրել ռևոլյուցիայի զարգացման ընդհանուր օրինաչափություններին։

Նա, չհամաձայնվելով Ա. Սուրգուլաձևի հետ, Սովետական իշխանության համար մղված պայքարի ժամանակաշրջանը բաժանում է երեք էտապի. ա) 1917 թ. փետրվարից հոկտեմբեր, բ) հոկտեմբերից Բաքվի կոմունայի անկումը, գ) Բաքվի կոմունայի անկումից մինչև Սովետական իշխանության հաղթանակը։

Ինչ վերաբերում է 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբներին իշխանության գրավման հնարավորության խնդրին, նա գտնում է, որ այդ հարցը դեռ բավարար չափով չի ուսումնասիրված։

Զուգաևը գտնում է, որ բանակի օգտագործման, բոլշևիկների Երկրային կոմիտեի քաղաքականության գնահատականի և ազգային հարցերը կարոտ են լուրջ ուսումնասիրության։

Իրենց ելույթներում պատմական գիտությունների թեկնածուներ Մ. Ցերցվաձեն և Ստուրուան պաշտպանեցին այն տեսակետը, որ 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբներին առկա են եղել իշխանության գրավման բոլոր ռեալ պայմանները։ Միաժամանակ նրանք լիովին պաշտպանեցին Ե. Բուրչուլաձեի թեզերը Սովետների մասին։

Ընկեր Էլչիբեկյանը արծարծեց այն միտքը, որ Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայից հետո Անդրկովկասի բոլշևիկները կարող էին իշխանությունը վերցնել, հենվելով Կովկասյան ռազմաճակատի ռևոլյուցիոն զինվորների վրա, բայց ամրապնդել այն՝ ոչ, որովհետև զինվորները չէին մնալու Անդրկովկասում. նրանք շտապում էին տուն։

Այնուհետև ընկ. Էլչիբեկյանը խոսեց Սովետական իշխանության Անդրկովկասում հաստատման ձգձգվելու պատճառների մասին։

Սեսիայում ելույթներ ունեցան նաև Ա. Սումբաթ-զադեն, Պ. Մոսեսովը և ուրիշներ։

Սեսիայի աշխատանքները ընդհանրացրեց ակադեմիկ Ի. Ի. Մինցը, որը կանգ առավ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պատմության ուսումնասիրման բնագավառում կատարած աշխատանքների վրա, ընդգծեց սեսիայի աշխատանքների գիտական բարձր մակարդակը, հատկապես նոր երիտասարդ կադրերի աճը։

Սեսիան, ասաց Ի. Մինցը, մեծ նշանակություն ունեցավ Անդրկովկասում Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պատմության ուսումնասիրման գործում, սակայն այդ առաջին քայլն է, հարկավոր է ավելի խորը զբաղվել այդ հարցով քանի որ դեռևս չուսումնասիրված մեծ թվով պրոբլեմներ կան։

Այնուհետև Ի. Մինցը անհրաժեշտ համարեց երեք ռևսպուբլիկաների գիտնականների ընդհանուր ուժերով գրել մի ամբողջական աշխատություն Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի մասին Անդրկովկասում։

Որոշվեց սեսիայի նյութերը հրատարակել առանձին գրքով։ Այդ կատարելու է Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան։

Լ. Ա. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻՆ

Փետրվարի 19-ին լրացավ հայ մեծատաղանդ Հովհաննես Թումանյանի ծննդյան 90 տարին։ Այս կապակցությամբ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը փետրվարի 13-ին Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում հրավիրել էր գիտական սեսիա։

Սեսիայում բացման խոսք ասաց Գրականության ինստիտուտի գիտական խորհրդի անդամ, գրող Ստեփան Զորյանը։

— Թումանյանը,— ասում է նա,— մի ինքնբերնակ ու բացառիկ երևույթ եղավ մեր գրականության մեջ. մեր ժողովրդի կյանքը, հույզերն ու աշխարհազգացումը նա նկարագրեց ու երգեց մի այնպիսի ինքնատիպ, անմիջական արվեստով և ժողովրդական հյութեղ լեզվով ու ոճերով, որ միանգամից գարձավ հարազատ ու սիրելի։

Նա հարազատ ու սիրելի է թե՛ մեծերի և թե՛ փոքրերի համար, ամբողջ ժողովրդի համար, որովհետև հայ բանաստեղծներից և ոչ մեկը մեր ժողովրդի վիշտն ու հույզերը չի երգել այնքան պայծառ ու հարազատ, որքան Թումանյանը...

Թումանյանի գեղեցիկ երգերը մեր ժողովրդի հին ու նոր ցավերը և ազատ կյանքով ապրելու անմար կարոտը, երգերը նա անձնական հույզեր, թե հյուսեց պոեմներ ու պատմվածքներ, մշակեց լեգենդներ, էպոս, թե հեքիաթներ, կամ՝ կյանքի իմաստը որոնեց բառյակների մեջ—ամեն տեղ Թումանյանը խոսեց ժողովրդի սրտից...

Թումանյանի երկերը, լինելով կատարյալ արվեստի գործեր՝ այսօր էլ թարմ են, ինչպես իրենց ստեղծման առաջին օրերին։ Ժամանակը չի մաշել նրանց։ Ընդհակառակը, գնալով նրանք ավելի են փայլում, ինչպես անգին քարերը... իսկ նրանց ընթերցողը կատարելապես հագեցնում է արվեստի իր ծարավը...

Բայց պետք է ընդգծենք ցավելով,— շարունակում է իր խոսքը ընկ. Զորյանը,— որ Թումանյանի բարձր կլասիկ ստեղծագործությունը մինչև այժմ չի ունեցել իրեն արժանի մի բազմակողմանի ուսումնասիրություն ու գնահատություն, որպեսզի ժողովուրդը ո՞չ միայն զգար, այլև հստակ պատկերացներ բանաստեղծի մեծությունը, նրա զմայլելի պարզ արվեստի և անմիջական խոսքի ուժը։

Այդ պարտքը առաջին հերթին ընկնում է, իհարկե, Ակադեմիայի Գրականության ինստի-